«ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ 2023

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ ***ՈՒՍՈՒՑՉԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԳՈՐԾԸՆԿԵՐՆԵՐԻ ՀԵՏ՝ ՓՈՐՁԻ ՓՈԽԱՆԱԿՄԱՆ ԵՎ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ***

ԱՌԱՐԿԱ **ՖԻԶԻԿԱ**

ՀԵՂԻՆԱԿ **ՆՎԱՐԴ ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆ**

ՄԱՐԶ **Ք. ԵՐԵՎԱՆ**

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ Գ. ՄԱՀԱՐՈՒ ԱՆՎԱՆ Հ. 176 Հ/Դ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ......3

ԳԼՈՒԽ.1 ՈՒՍՈՒՑՉԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԳՈՐԾԸՆԿԵՐՆԵՐԻ ՀԵՏ՝ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ.....5

1.1 Ուսուցիչների համագործակցությունը մանկավարժական նորարարությունների համատեքստում.....5

1.2 Առարկայական մասնախմբերը՝ որպես ուսուցիչների համագործակցության ու փոխօգնության հարթակ.....7

ԳԼՈՒԽ 2. ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՓՈՐՁԻ ՓՈԽԱՆԱԿԱՄԱՆ ԱՆՀՐԱԵՇՏՈՒԹՅՈՒՆԸ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԿՈՄՊԵՏԵՆՑԻԱՆԵՐԻ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՄԱՆ ՏԵՍԱՆԿՅՈՒՆԻՑ.....10

2.1 Մանկավարժական օրինակելի փորձի փոխանակումը դպրոցում.....10

ԳԼՈՒԽ 3. ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՕՐԻՆԱԿ՝ ՕՐԻՆԱԿԵԼԻ ԴԱՍԻ ՊԼԱՆԻ ՆՄՈՒՇ-ՕՐԻՆԱԿ.....15

Եզրակացություն.....18

Օգտագործված գրականության ցանկ.....19

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Կրթության զարգացման ժամանակակից միտումներին համապատասխան ուսուցչի մասնագիտական գործունեությունը և աշխատանքային փորձը կարևոր ներդրում կարելի է համարել դպրոցի մանկավարժական գործընթացի բարելավման տեսանկյունից: Մանկավարժական բարձր կոմպետենտությունն ու մշակույթը այսօր դիտարկվում են որպես կոմպետենցիաների ինտեգրված ամբողջություն, որի միջոցով իրականացվում է ուսուցչի ուսումնադաստիարակչական, տեղեկատվական, հաղորդակցական, հանրամշակութային գործունեությունը: Այսպիսով կարիք կա ձևավորել հասարակական և փոփոխվող աշխարհի պահանջներին համապատասխան ակտիվ անհատների ձևավորման անհրաժեշտության: Մանկավարժական փոփոխվող հարացույցը ուսուցչակենտրոնից դեպի աշակերտակենտրոն ուղղվածություն է ստանում շնորհիվ փոխներգործուն մեթոդների ներմուծման և դրանց առավելությունների գիտակցման: Դրանք արդյունավետ մանկավարժական ռազմավարություններ են, որոնք ուղղորդում են սովորողներին և ուսուցչիներին համագործակցելու, հագեցնելու մանկավարժական գործընթացը նոր ժամանակակից կրթական տեխնոլոգիաներով: Ժամանակակից դպրոցը պահանջ ունի այնպիսի մանկավարժի, ով իր մասնագիտական որակների շնորհիվ կարողանում է հարստացնել ուսուցման և դաստիարակության մեթոդները, ավանդական մեթոդների կողքին լայնորեն կիրառել ժամանակակից փոխներգործուն մեթոդները: Այս հրամայականն իր հետ բերել է նոր, ժամանակի պահանջներին համապատասխան որակի կրթություն ունենալու ձգտումը:

Կարող ենք վստահաբար ասել, որ ուսուցչի համար գործընկերների հետ համագործակցությունը խիստ կարևոր նշանակություն ունի: Օրինակելի փորձը, որը սկսնակ ուսուցիչը կարող է վերցնել ավագ ու փորձառու գործընկերներից, մեծապես նպաստում է, որպեսզի ուսուցիչն արդեն գործնականում պատկերացում կազմի այս կամ այն խնդրո առարկայի վերաբերյալ: Ուստի սովորել սովորեցնելով բանաձևն այստեղ լայնկիրառելի է: Սակայն երբեմն բազմավաստակ ուսուցիչների փորձի ընդհանրացման կարիք կա, որը ձևավորում է տվյալ դպրոցի մանկավարժական մշակույթի պատկերը:

Այն ուսուցիչները, ովքեր ավելի փորձառու են, տեղեկացված են ավելի հետաքրքիր, արդյունավետ և համարձակ դասավանդման մեթոդներին, կարող են կառուցել արդյունավետ դասեր և ապահովել շարունակական ուսուցում: Նրանք ի վիճակի են կազմել և ընտրել դասավանդման այնպիսի մեթոդներ և միջոցառումներ, որոնց միջոցով համապատասխանաբար զարգանում են աշակերտների գիտելիքները, կարողություններն ու հմտությունները՝ հենված փորձի և արժեքների վրա: Ստացվում է, որ օրինակելի փորձի փոխանակումը կարող է մոտիվացնել ուսուցչին գտնելու նոր ճանապարհներ, նոր հմտություններ դասավանդման արդյունավետության բարձրացման նպատակով:

Նկատենք, որ ուսուցիչների համագործակցությունը, օրինակելի փորձի փոխամակումն ու փոխանցումը միտված է ուսումնական գործընթացն ավելի հարուստ, բովանդակային ու արդյունավետ դարձնելուն: Համագործակցային գործընթացում ուսուցիչների քննարկումները, կրթական նոր եղանակների վերլուծությունը, խնդրահարույց իրավիճակներից ելքերի որոնումը միտված է մեկ ընդհանուր նպատակի՝ սովորողի համար դասը դարձնել հետաքրքիր և այդպիսով բարձրացնել ուսուցման որակը:

Հետազոտության թեմայի արդիականությունը: Համագործակցային փոխհարաբերությունների ձևավորումը գործընկերային հարաբերությունների մակարդակը դարձնում է առավել արժեքահեն և որակյալ: Ստեղծելով մանկավարժական հարսուստ փորձի փոխանակման համագործակցային մթնոլորտ՝ հնարավոր է նպաստել ուսուցիչների մասնագիտական գործունեության արդյունավետության բարձրացմանը, մոտիվացիաների ստեղծմանն ու դրանց վրա հենված՝ մանկավարժական կոմպետենցիաների ձևավորմանը: Մանկավարժական փորձի փոխանակման, մասնագիտական գործիմացության լայն տեսադաշտի ձևավավորման ուսումնասիրությամբ է պայմանավորված մեր հետազոտական թեմայի արդիականությունը:

Հետազոտության նպատակը: Բացահայտել ուսուցչների արդյունավետ համագործակցության անհրաժեշտությունն ու կարևորությունը՝ մանկավարժական գործընթացի բարելավման և արդյունավետության տեսանկյունից:

Հետազոտության խնդիրը: Դուրս բերել և ձևակերպել այն արդյունավետ եղանակները, որոնց միջոցով ուսումնական հաստատությունում գործընկեր ուսուցիչների միջև տեղի է ունենում համագործակցություն, փորձի փոխանակում:

ԳԼՈՒԽ.1 ՈՒՍՈՒՑՉԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԳՈՐԾԸՆԿԵՐՆԵՐԻ ՀԵՏ՝ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ

1.2 Ուսուցիչների համագործակցությունը ինտեգրված դասերի կազմակերպման շրջանակներում

Զարգացման արագացող տեմպերով պայմանավորված՝ այսօր ընդլայնվել է սովորողների հետաքրքրությունների շրջանակը: Սովորողի բազմակողմանի զարգացման ու համակողմանի դաստիարակության իրականացումը դժվար է պատկերացնել առանց միջառարկայական կապերի օգտագործման, առանց սովորողների հետաքրքրությունների բարձրացման: Ուստի այսօրվա կրթական համագարգում անչափ կարևորվում է միջառարկայական կապերի տեղն ու դերը: Գիտելիքների ձեռքբերումը և կարողությունների ձևավորումը սերտորեն կապված են միմյանց հետ և մեկը մյուսի համար հիմք ու ելակետ է: Հետևաբար, սովորողներին հնարավորին չափ բազմակողմանի ու ընդարձակ տեղեկություններ տալը, ուրիշ գիտելիքների հետ կապի մեջ դնելը, դրանք շրջանառության մեջ պահելը կարևոր ու վճռող նշանակություն ունեն վերջիններիս աշխարհաճանաչողության համար:

Եթե միջառարկայական կապերը հեշտ ու տեղին, չափավոր ու նպատակային չօգտագործվեն, ակամա դրանք կարող են դասագործընթացի հիմնական սկզբունքը դառնալ և դասի բուն նպատակը մղել երկրորդ պլանի վրա, դարձնել անկարևոր, ուստի այս գործընթացում անչափ կարևոր է ուսուցիչների կշռադատված ու նպատակաուղղված համագործակցությունը:

Ինտեգրված դասերի կազմակերպման ընթացքը բավականաչափ արդյունավետ կարող է լինել մասնակից ուսուցիչների համար: Սա համագործակցման ու փորձի փոխանակման անմիջական գործընթաց է, որի ժամանակ բոլոր ուսուցիչները հավասարաչափ ջանք են գործադրում, որպեսզի ուսուցման գործընթացը լինի ապարդյունավետ:

Ինտեգրված դասը դասի հատուկ տեսակ է, որի շրջանակներում մեկ հասկացության ուսուցման ժամանակտեղի է ունենում մի քանի առարկաների միաժամանակյա ուսուցումը: Այսպիսի դասի ընթացքում միշտ առանձնացվում է առաջատար առարկան, որը հանդես է գալիս որպես ինտեգրող մաս, այն նպաստում է ուսուցանվող նյութի խորացմանը, ընդլայնմանն ու հստակեցմանը:

Ինտեգրված դասերը կարող են միավորել ինչպես տարբեր առարկաներն իրենց ամբողջ ծավալով, այնպես էլ առանձին առարկաների բաղադրիչներ: Ինտեգրված դասը միավորում է նաև ուսուցիչներին: Երկու ուսուցիչներ պարզում և որոշում են իրենց առարկաների համատեղ հետաքրքրությունը: Այստեղ շատ կարևոր է ուսուցիչների փոխգործունեության ճիշտ կազմակերպումը, քանի որ նրանցից յուրաքանչյուրի գործողությունների հաջորդականության արդյունավետությունից է կախված ինտեգրված դասի որակը: Տարբեր առարկաներից վերցրած այս բաղադրիչները, որոնք միավորվում են մեկ դասի մեջ, կազմում են մեկ համակարգ, որի շուրջ հավաքվում և մի նոր համակարգ է դառնում ուսումնական նյութը: Որպեսզի ինտեգրվեն, այսինքն՝ ճիշտ ձևով միավորվեն ուսումնական գործընթացի բաղադրիչները, պետք է կատարվեն այնպիսի գործողություններ, որոնք ի սկզբանե ունեն ստեղծագործական բնույթ: Այս նախապատրաստական գործունեության ընթացքում առանցքային նշանակություն ունեն ուսուցիչների համագործակցելու, իրարից սովորելու, ընդհանուր նպատակներ ու խնդիրներ գտնելու կարողությունները: Նախապատրաստական գործունեության ընթացքում ուսուցիչը որոշում է.

- ինտեգրված դասի անցկացման իր դրդապատճառներն ու նպատակը;
- համակարգ ձևավորող բաղադրիչների մեջ առաջատարի և երկրորդականի առանձնացումը;
- ինտեգրման ձևը;
- միավորվող նյութերի միջև կապերի բնույթը
- նյութի հաջորդականության կառուցվածքը
- նյութի ներկայացման միջոցները;
- դերերի բաշխումը ինտեգրվող առարկաների ուսուցիչների միջև
- տվյալ դասին սովորողների ուսուցման վերահսկման ձևերն ու տեսակները:

Այսպիսով, ելնելով ինտեգրված դասի տեսակից և ինտեգրվող առարկաների դասերի տիպերից, ուսուցիչները համատեղ կազմում են իրենց դասի նպատակները՝ զուգակցելով ընդհանուրը մասնավորի հետ, շաղկապելով ինտեգրվող նյութի բովանդակությունները տարբեր առարկաների տեսանկյուններից:

Ուսուցման գործընթացում կարևոր տեղ պետք է հատկացնել միջառարկայական կապերին, որոնք ուսուցման հաջողության անհրաժեշտ

պայմաններից են: Միջառարկայական կապերի մասին Յ.Ա.Կոմենսկին իր «Մեծ դիդակտիկա» աշխատությունում նշում է, որ ուսումնական առարկաների փոխկապակցված ուսուցումը երեխաներին սովորեցնում է բացահայտել ուսումնասիրվող առարկաների և երևույթների միջև եղած կապերը. «Ամեն ինչ ամրապնդել բանականության հիմունքներով նշանակում է ամեն ինչ սովորել՝ մատնացույց անելով պատճառները, այսինքն՝ ոչ միայն ցույց տալ, թե ինչպես է այս կամ այն բանը տեղի ունենում, այլ նաև ցույց տալ, թե ինչու դա այլ կերպ լինել չի կարող: Չէ՞ որ իմանալ որևէ բան նշանակում է իրը ճանաչել իր փոխկապակցվածության մեջ»[1]: Միջառարկայական կապեր գոյություն ունեն հատկապես տեխնոլոգիա, մաթեմատիկա, երկրաչափություն, կերպարվեստ, ֆիզիկա առարկաների միջև: Այդ առարկաներից յուրաքանչյուրի ուսուցման ընթացքում ձեռք բերված գիտելիքները, ունակությունները և հմտությունները լայնորեն կիրառվում են մյուս առարկաների ուսուցման գործընթացում:Այստեղ կրկին պետք է կարևորենք ուսուցիչների փոխգործակցությունը, մի նպատակի համար կոլեկտիվ աշխատանքը[2]:

Կրթության կարևորությունը գնահատելով՝ պետք է ընդունենք, որ կրթության միջոցով կարելի է հասնել հասարակական մտածողության, հոգևոր-բարոյական և մշակութային արժեքների զարգացման: Ինտեգրված ուսուցումը, ապահովելով տարբեր առարկաների գիտելիքների համակցումը, նպաստելու է հետազոտական հմտությունների, ստեղծագործական կարողությունների ձևավորմանը և դրանց հիմքի վրա նրանց կայուն զարգացման իրականացանը: Չմոռանանք, որ ուսուցման այս տեսակը կարելի է համարել հաջողված միայն մանկավարժական առողջ համագործակցության արդյունքում:

1.2 Առարկայական մասնախմբերը՝ որպես ուսուցիչների համագործակցության ու փոխօգնության հարթակ

Մեթոդական միավորումը ուսումնական հաստատության մեթոդամանկավարժական գործունեության հիմնական կառուցվածքային տարրն

[1] Կոմենսկի Յ. Ա., Մեծ դիդակտիկա, Զանգակ հրատ., 2010, էջ 34

[2] http://gspi.am/media/journal/2014n1b/33.pdf Ս. Ժ. Արշակյան, Գիտական տեղեկագիր, Դասավանդման մեթոդիկա, Երևան, 2014, էջ 293:

է, որն իրականացնում է ուսումնական, դաստիարակչական, մեթոդական և արտադասարանական աշխատանքների համակարգումը դպրոցում: Մեթոդական միավորումների աշխատանքը բազմաբնույթ է: Այն միտված է ուսուցչի մասնագիտական որակների բարձրացմանը՝խրախուսելով կոլեկտիվում աշխատելու և համագործակցելու վերջինիս ցանկությունը: Առարկայական մեթոդական միավորման բոլոր անդամներն ունեն հավասարազոր իրավունքներ ու պարտականություններ: Իրենց կատարած աշխատանքով վերջիններս հաշվետու են մեթոդական միավորման նախագահին, ով ի պաշտոնե համակարգում է միավորման աշխատանքները՝ դրանք ամփոփելով միավորման նիստերի ժամանակ:

Առարկայական մեթոդական միավորումների նիստերը գումարվում են առնվազն յուրաքանչյուր ամիսը մեկ անգամ: Սահմանված կարգով նիստերն արձանագրվում են[3]: Մանկավարժական այս օղակի գործունեության հենքում մանկավարժական որակների բարձրացումն է: Այստեղ իրականացված բազմաբովանդակ գործառույթները օգնում են ուսուցչին համակարգել իր ողջ մարդկային ներուժը, աշխատանքին մոտենալ ստեղծագործաբար, գնալ նոր ու հետաքրքիր գաղափարների որոնման ճանապարհով: Ուսումնական գործընթացը համակարգվում է, քանի որ մի նպատակի իրագործման համար աշխատում է մանկավարժների ամբողջ մի թիմ, բացառվում է ցանկացած անհատական շահ, բոլորը գործում են՝նպատակ ունենալով համակարգել ուսումնադաստիարակչական գործընթացն ու բարձրացնել սովորողների կրթության որակը:

Ժամանակակից կրթությունն ուղղված է սովորողների մտածողության, մասնագիտական նախաձեռնողականության, ինքնուրույնության զարգացմանը ինչը կապահովի մրցունակ մասնագետի պատրաստումը: Դպրոցի գերխնդիրն է կոմպետենտ մանակավարժ ունենալը, ով արագ հարմարվում է փոփոխություններին, կրեատիվ է, կողմնորոշվող, նորարար, անընդհատ թարմացնում և ավելացնում է իր մասնագիտական գիտելիքները:

Բերենք մեթոդական միավորման ներսում ուսուցիչների համագործակցության մի քանի իրավիճակային օրինակներ: Բնագիտական առարկաների մեթոդական միավորման նախագահը մեկ այլ ֆիզիկայի ուսուցչի հետ ներկայանում է սկսնակ ուսուցչի դասին, որպեսզի իրականացնի փոխադարձ

[3] https://www.arlis.am/documentview.aspx?docID=74345 ՀՀհանրակրթության մասին օրենք

դասալսում: Դասալսման նպատակն է ստուգել սովորողների մասնակցությունը դասին: Արդյունքում արձանագրվում է, որ սովորողների հիմնական մասը դասին պասիվ էր կամ ոչ ուշադիր, այլ խոսքով՝ դասը չէր ծառայում նպատակին, և ուսուցիչը դասի ավարտին չկարողացավ հասնել չափորոշչային պահանջներին: Անշուշտ, պետք է հետևողական լինել, որ արձանագրված խնդիրը ստանա համապատասխան լուծում, ուսուցիչը հասկանա՝որտեղ է իր բացթողումը և իրավիճակը շտկվի: Այդ նպատակով գումարվում է արտահերթ մեթոդական միավորման նիստ՝ սահմանելով հետևյալ օրակարգը.

- Ուսուցիչները պետք է հանդես գան դասի ընթացքում մեթոդների կիրառման իրենց փորձի մասին մեթոդական զեկույցներով,
- Զեկույցները պետք է ներկայացվեն սահիկաշարի օգնությամբ,
- Քննարկման միջոցով պետք է պարզաբանվեն մեթոդների կիրառության առավելություններն ու թերությունները՝ հենվելով կոնկրետ օրինակների վրա,
- Փորձառու ուսուցիչները պետք է ունենան ելույթներ՝ դասի տիպերին, փուլերին վերաբերվող,
- Տեղում պետք է կատարվեն առաջադրանքներ:

Ստացվեց, որ մեթոդական միավորման նախագահը, պահպանելով մանկավարժական էթիկան, խնդրին տվեց համակարգային լուծում: Անշուշտ, կոնկրետ ուսուցիչը ծանոթացավ դասալսումների մատյանում արված արձանագրությանը, միավորման նախագահի հետ քննարկեց, վերլուծեց իր բացթողումները:

Ուսումնասիրելով հիմնախնդիրը՝ եկանք եզրակացության, որ ուսուցչի մասնագիտական կոմպետենտության զարգացումն արդի կրթական պահանջների արտացոլանքն է, որում մանկավարժական կոմպետենտությունը սահմանվում է որպես ուսուցչի գիտելիքների, կարողությունների, իրազեկությունների և մասնագիտական պատրաստվածության մակարդակ, ինչը հնարավորություն է տալիս արդյունավետորեն գործել փոփոխվող սոցիալական, մշակութային և մասնագիտական իրավիճակներում: Ինչպես նաև արձանագրեցինք, որ ուսուցչի մասնագիտական որակների բարձրացման համար անգնահատելի է համագործակցությունը գործընկերների հետ՝ ինչպես ուղիղ, այնպես է առարկայական մասնախմբերի աշխատանքների շրջանակներում:

Աշխատանքի ուսումնասիրության ընթացքում զանազան ձեռնարկների ուսումնասիրությունը թույլ տվեց մեզ է՛լ ավելի համակողմանի պատկերացնել հետազոտության թեմայի կարևորությունը, դրանից բխող խնդիրները: Կարծում ենք, որ աշխատանքը կծառայի իր նպատակին՝ դառնալով մեզ համար առիթ՝ գործընկերների հետ ակտիվ համագործակցային հարաբերություններն է՛լ ավելի ամրացնելու համար:

ԳԼՈՒԽ 2. ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՓՈՐՁԻ ՓՈԽԱՆԱԿՄԱՆ ԱՆՀՐԱԵՇՏՈՒԹՅՈՒՆԸ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԿՈՄՊԵՏԵՆՑԻԱՆԵՐԻ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՄԱՆ ՏԵՍԱՆԿՅՈՒՆԻՑ

2.1 Ուսուցիչների համագործակցությունը մանկավարժական նորարարությունների համատեքստում

Հանրակրթկան դպրոցներում ուսուցիչների միջև համագործակցության բազմաթիվ ձևեր կարելի է ակտիվացնել՝ նպաստելով ուսուցչական կուռ ու միասնական համայնքի ստեղծումից մինչև գիտահետազոտական և այլ տարբեր ուղղվածության նախագծերի մշակման և իրականացման: Դրա համար նախևառաջ պետք է հաշվի առնվեն ուսուցչի մասնագիտական կարողունակությունները և համագործակցության համար հարկավոր է բազմակողմանիորեն քննել ուսուցչին ներկայացվող մասնագիտական չափանիշները, որոնք սահմանվում են՝

1. Առարկայի խորը իմացությամբ,
2. Դասավանդման պրակտիկ կարողություններով,
3. Սովորողին ցուցաբերվող աջակցությամբ,
4. Ինքնազարգացմամբ[4]:

Ըստ ուսուցչի մասնագիտական կարողունակության մակարդակների որոշարկման տարանջատում ենք չորս մակարդակ՝ դասավանդող, ավագ ուսուցիչ, վերապատրաստող և հետազոտող ուսուցիչ և ուսուցչի համապատասխանությունը

[4] Նախարարի 2022թ. օգոստոսի 5-ի «Հանրակրթական ուսումնական հաստատության ուսուցչի մասնագիտական չափանիշները սահմանելու մասին» N 30-Ն հրաման

մանկավարժի չորս մակարդակային բնութագրերից որևէ մեկին որոշվում է մասնագիտական զարգացման կարիքների գնահատման արդյունքում: Ըստ մանկավարժական վերոնշյալ չորս բնութագրերի՝ ուսուցչին կարող է շնորհվել համապատասխան տարակարգ: Ցանկացած մակարդակի դեպքում նվազագույն պահանջների իրականացման պարդադիր պայմանը պետք է ապահովված լինեի: Այսպես, օրինակ՝ ուսումնական նյութերի կիրառումը դասարանային գործունեության ընթացքում պետք է տրվի պարզորոշ բացատրություններով, բազմաթիվ գործնական օրինակներով, պատկերազարդումներով և քայլ-առ քայլ նկարագրված մեթոդներով/Էնթոնի Ջ.Նիտկո/: Դասվանդումն ու գնահատումը պետք է լինեն միահյուսված, իրարից բխող: Խիստ կարևոր է, որ ուսումնական գործընթացում ուսումնասիրվող թեմաները մեկնաբանվեն սովորողների համար: Դրանով կբացահայտվեն գնահատման յուրաքանչյուր եղանակի ուժեղ և թույլ կողմերը: Հետևաբար ուսուցիչը պետք է լինի որակյալ մասնագետ, որի աշխատանքային փորձն ու դատողություններն անհրաժեշտ են սովորողների առաջադիմության պատշաճ գնահատման համար[5]: Այս տեսանկյունից հաջողակ փորձի փոխանակման յուրաքանչյուր օրինակ կարող է նպաստել մանկավարժ կոլեգիայի մասնագիտական աճին, զարգացնել նրա գործիմացությունը, նպաստել ընկերոջ հաջողակ մասնագիտական փորձի հիման վրա ստեղծագործել և հեղինակել նոր, ուրույն ու ինքնատիպ լուծումներ մասնագիտական գործունեության ընթացքում: Համընդհանուր ներառական կրթությունը հանդիսանում է որպես յուրաքանչյուր երեխայի կրթության իրավունքի ապահովման երաշխիք: Ներառական կրթության քաղաքականությունը նպատակաուղղված է յուրաքանչյուր երեխայի կրթության մատչելիության, հավասար մասնակցության հնարավորության և որակի ապահովմանը: Այստեղ ևս կարևորվում է, որ ուսուցիչը կարողանա հասցեական մանկավարժական մոտեցում ցուցաբեի դասարանում սովորող յուրաքանչյուր երեխայի՝ ըստ կատարված կարիքի գնահատման, տվյալ առարկայական ծրագրին համապատասխան: Հետևաբար այստեղ ևս կա մասնագիտական զարգացման կարիք և պատասխանատվության ստանձնում, որի արդյունքում ուսուցիչը կունենա իր ուժերի հանդեպ վստահություն, վերլուծաքննադատական մտածողություն: Հանդուրժողականությունը և դասարանի կառավարման հմտությունը պետք է

[5] Ժամանակակից մանկավարժական մոտեցումներ. Տեսություններ, մեթոդներ, գնահատում. հեղ.Ս.ՎարդումյանՆ.Ջաղինյան,Լ. Հարությունյան, Գ.Վարելլա

լինեն յուրաքանչյուր ուսուցիչ կարևորագույն հատկանիշները՝ ողջ մանկավարժական գործունեության ընթացքում:

Անդրադառնալով այն հարցին, թե հաջող մանկավարժական փորձ կամ մանկավարժական վարպետություն ասելով ինչ ենք հասկանում, կարելի է այն ձևակերպել հետևյալ կերպ. այն նորարար և ստեղծարար ուսուցչի մանկավարժական աշխատանքի արգասիքն է, համահավաքը, որը կարող է շատ ուսուցիչների օգտակար լինել և ծառայել որպես առաջավոր փորձ մասնագիտական գործունեության ընթացքում: Նման ուսուցիչը պետք է լինի հետազոտող և ինովացիոն տիպի, նախաձեռնող և ժամանակի շնչին հետևող, բայց նաև՝ համագործակցող և աջակցող:

Կրթության պահանջների կյանքի կոչելը մեծապես կախված է ուսուցչի աշխատանքի որակից. որքան բարձր են վերջինիս մասնագիտական ու մարդկային որակները, ինքնազարգանալու, նորը սովորելու ցանկությունը, այդքան ուսուցիչը շատ բան ունի տալու մատաղ սերնդին:

Բոլոր ուսուցիչներն իրենց աշխատանքային գործընթացում և մասնագիտական զարգացման ընթացում պետք է կարողանան հաշվի առնել իրենց առարկաների հիմքը, դրսևորել քննադատական մոտեցում, կապել այլ ոլորտների և բնագավառների հետ, որպես համընդհանուր արժեք՝ խթանել հանդուրժողականությունը, հավասարության խնդիրները, բազմազանությունը և մարդու իրավունքների նկատմամբ հարգանքը:

Այն ուսուցիչները, ովքեր ավելի փորձառու են, տիրապետում են ավելի հետաքրքիր, արդյունավետ և արդիական դասավանդման մեթոդներին: Այս պարագայում հավանականությունն ավելի մեծ է, որ վերջիններս կարող են կառուցել արդյունավետ դասեր և ապահովել շարունակական ուսուցում: Նրանք ի վիճակի են ընտրել դասավանդման այնպիսի մեթոդներ, որոնք ոչ միայն սովորողների , այլև ուսուցիչների հետ են համագործակցային ձևեր պահանջում: Օրինակ եթե սովորողների հետ խմբային աշխատանքները կարող են նպաստել սոցիալական հմտությունների զարգացմանը, ապա միջառարկայական կապերը առավել ամուր տալու նպատակով կարող է ուսուցիչը ընդառաջ գնա և սկսի մանկավարժական համագործակցություն տարբեր առարկաներ դասավանդող ուսուցիչների հետ:

Հենց այստեղ է ծագում անհրաժեշտություն, որ դպրոցում ավելի կայացած ու փորձառու ուսուցիչները ամեն կերպ փորձեն օգնել սկսնակ կամ ոչ փորձառու

ուսուցիչներին՝կիսվելով վերջիններիս հետ իրեն մեթոդամանկավարժական գիտելիքներով, տեղեկատվական հոսքերի կառավարման փորձառությամբ:

Այս համատեքստում խրախուսվում է մանկավարժական նորարարությունը: Մանկավարժական նորարարությունը (ինովատիկա) բարդ, բազմաբաղադրիչ, դինամիկ կառուցվածք ունի, որտեղ կարելի է առանձնացնել բովանդակային, անձնային, կազմակերպչական, կառավարչական գործառույթները: Մանկավարժական նորարարությունը նոր, միջառարկայական ինտեգրված գիտական ուղղություն է, որն արտացոլում է փիլիսոփայական, սոցիալ-հոգեբանական, տեղեկատվական, մանկավարժական, մեթոդական և այլ ոլորտների ձեռքբերումները՝ լուծելու համար մանկավարժական գիտության և պրակտիկայի առաջ կանգնած ժամանակակից հիմնախնդիրներ: Ուսուցչի գործունեության մեջ որևէ նորույթի ներդրման, մանկավարժական կոլեկտիվի կողմից նրա յուրացումը ապահովելու համար նախապես պետք է պլանավորվեն, կազմակերպվեն և կոորդինացվեն մասնագիտական ուժերը, և նրա իրացման համար ստեղծվի առաջընթաց վերահսկողության մեխանիզմը:

Այսինքն՝ այդ գործընթացում պետք է իրականացվեն որոշակի կառավարչական գործողություններ ըստ փուլերի.

- նորամուծության պլանավորում,
- նորամուծության կազմակերպում,
- նորամուծության կոորդինացում,
- նորամուծության վերահսկում:

Պլանավորելով նորամուծության գործընթացը՝ ուսուցչը պետք է նախատեսի, թե ինչ արդյունքներ են սպասվում նորամուծության յուրացումից, ինչ գործողություններ պետք է կատարվեն դրա համար, որտեղ, երբ, ինչպես:

Նորամուծության ներդնման պլանավորման գործընթացը ունի իր առանձնահատկությունները, որոնք պայմանավորված են ինովացիոն գործընթացի դինամիկայով և սպասվող արդյունքների կանխատեսմամբ: Միաժամանակ պլանավորման վրա կարող է ազդել ինովացիոն գործընթացի ոչ գծային կառուցվածքը: Այդ պատճառով ինովացիոն գործընթացի պլանավորումը պետք է լինի ճկուն և տարբերակային: Որևէ ժամանակահատվածի համար նախատեսված պլանավորման տարբերակների մշակումը պետք է կատարել այնպես, որ նրանք կիրառվեն կարճաժամկետ պլանավորման և միջանկյալ նպատակների արդյունքների հաշվառման համար:

Տարբերակայնությունը վերաբերում է ոչ միայն պլանավորվող գործողությունների բովանդակությանը և խնդիրների լուծման ռազմավարությանը, այլև պլանային առաջադրանքների բաշխմանը՝ ժամանակի և պատասխանատու անձանց միջև: Այսինքն բավականին բարդ խնդիր է որոշել, թե որքան ժամանակ կպահանջվի այս կամ այն գործողության իրականացման համար, ինչ հաջորդականությամբ պետք է իրականացվեն նորամուծության պլանավորման աշխատանքները: Այդ իսկ պատճառով պլանավորումը իրականացվում է անընդմեջ, այսինքն՝ ավարտվում է պլանով նախատեսված նորամուծության ներդնումը որևէ առարկայի դասավանդման և փորձի փոխանակման շրջանակներում ենթադրում է, որ դրան զուգահեռ մշակվում է նոր պլան՝ նորամուծության ցիկլի հաջորդ աստիճանին համապատասխան:

Պարտադիր է, որ ուսուցչի կատարած նորարարությունը ներդրվի տվյալ դպրոցի պրակտիկայում:

Իհարկե, ուսուցիչների հիմնական մասը տիրապետում է իր գործառույթների հիմնական շրջանակին, այդ թվում դասի ընթացքում բովանդակության և նպատակների ներկայացման, անցումային կետերի ազդանշման և հիմնական կետերի ամփոփման առումներով: Այնուամենայնիվ, դա բավական չէ ուսուցման գործընթացն արդյունավետ ու ստացված համարելու համար: Ուսուցիչը պետք է կարողանա հստակ ներկայացնել մի շարք հիմնական գաղափարների շուրջ իր տեսլականը, ունենա համապատասխան առարկայական բառապաշար, կարողանա կիրառել գործուն հարցադրումներ, որոնք համապատասխանում են դասի ուղղվածությանը:

Ինչպես նշել էինք, ուսուցիչների միջև մանկավարժական օրինակելի փորձի փոխանակումը կարելի է դիտարկել ուսումնադաստիարակչական գործընթացի ավելի արդյունավետ կազմակերպման համատեքստում: Այս առումով կարևոր ենք համարում նորարար ու նախաձեռնող ուսուցիչների դերը: Վերջիններս պետք է բաց լինեն համագործակցության համար, փորձեն ուղղորդել պակաս փորձառու կադրերին[6]:

Հանրակրթական դպրոցում ուսուցիչների համագործակցության գործընթացը պետք է իրականացվի անշահախնդիր, ամեն մեկն այստեղ չպետք է փնտրի անձնական շահ, հիմնական վերջնարդյունքը պետք է սահմանել՝ հաշվի առնելով

[6] https://www.arlis.am/documentview.aspx?docID=74345 ՀՀհանրակրթության մասին օրենք:

սովորողի շահը: Կրթական միջավայրի մարտահրավերները կառավարելու, մասնագիտական կարողունակությունները զարգացնելու, ուսուցման տարբեր ռազմավարություններ մշակելու և իրականացնելու ժամանակ շատ կարևոր է համագործակցային միջավայրի ստեղծումը գործընկեր ուսուցիչների համար:

Ուստի ուսուցիչներին պետք է միավորի փոխադարձ վստահությունը, թիմային համերաշխությունը, միմյանց աջակցելու ազնիվ մղումն ու պատրաստակամությունը: Աշխատանքային միջավայրում յուրաքանչյուր ուսուցիչ պարտավոր է պաշտպանել ոչ միայն իր, այլև գործընկերոջ հեղինակությունը: Նա չպետք է նսեմացնի գործընկերներին սաների կամ այլ անձանց ներկայությամբ:

Համագործակցային հարաբերություններում կարևոր է նաև քննադատական մտածողությունը, սակայն քննադատությունը և դիտարկումը պետք է լինի անաչառ և հիմնավոր, կառուցողական, տակտի զգացումով, բարյացակամ և ոչ վիրավորական: Անընդունելի է քննադատության ենթարկվող մարդուն ստորացնելը, հիմնախնդիրները պետք է լուծվեն ուսուցիչների ազատ և բաց քննարկումների միջոցով: Մանկավարժական աշխատողը պարտավոր է պահպանել ուսումնական հաստատության կանոնադրությամբ, ներքին իրավական ակտերով և կարգապահական կանոններով սահմանված պահանջները[7]:

Կարելի է պնդել, որ ինովացիոն գործընթացը բարդ դինամիկ համակարգ է, որի համար բնութագրական է բազմակառուցվածքայնությունը: Կապված այս բնութագրման հետ՝ նպատակահարմար է ներկայացնել Մ. Մ. Պոտաշնիկի, Վ. Ա. Լազարևի և այլ հեղինակների կողմից առաջադրված ինովացիոն գործընթացի կառուցվածքի և տարբեր կառույցների սահմանումը գործնական, սուբյեկտիվային, մակարդակային, բովանդակային, կառավարչական, կազմակերպչական, կենսական ցիկլի կառուցվածքը:

Անշուշտ, դրանց իմացությունը հաշվի առնելը ուսուցչի կողմից հնարավորություն կտա ավելի բարձր մակարդակով իրականացնելու ինովացիոն գործունեությունը՝ ձգտելով կրթական գործընթացի առավել բարձր արդյունավետություն:

[7] https://www.arlis.am/documentview.aspx?docID=74345 ՀՀհանրակրթության մասին օրենք

ԳԼՈՒԽ 3. ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՕՐԻՆԱԿ՝ ՕՐԻՆԱԿԵԼԻ ԴԱՍԻ ՊԼԱՆԻ ՆՄՈՒՇ-ՕՐԻՆԱԿ

ՕՐԻՆԱԿԵԼԻ ԴԱՍԻ ՊԼԱՆԻ ՆՄՈՒՇ-ՕՐԻՆԱԿ

1. ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐ՝ Ն.ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆ, Մ.ՊԵՏՐՈՍՅԱՆ, Ս. ՍԱՐԳՍՅԱՆ, Ն. ՀԱԿՈԲՅԱՆ
2. ԱՌԱՐԿԱՆ՝ ՖԻԶԻԿԱ, ՔԻՄԻԱ, ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ, ԿԵՆՍԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ
3. ԴԱՍԱՐԱՆԸ՝ 7-ՐԴ
4. ԴԱՍԻ ԹԵՄԱՆ՝ ՄԹՆՈԼՈՐՏ
5. ԴԱՍԻ ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ՝ ՄԵԿ ԱՄԻՍ
6. ԴԱՍԻ ՏԻՊԸ՝ ՄԻԶԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ/ ինտեգրված թեմատիկ միավոր/
7. ԴԱՍԻ ԵՌԱՄԻԱՎՈՐ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ՝

ա) ուսուցանող.

Աշակերտները կսովորեն

ա/ մթնոլորտի դերը, կազմությունը, նշանակությունը,գոյության պայմանները,
բ/ լրատվամիջոցների հաղորդագրությունները վերլուծել և կանխատեսումներ կատարել,
գ/ բնութագրել եղանակը/ եղանակաստեղծ գործոնների փոխադարձ կապերի բացահայտում/,
դ/ կատարել ամպլիտուդի միջինի /օրական, շաաթական, տարեկան/ հաշվարկներ՝ ամրապնդելով մաթեմատիկայի իմացությունը,
ե/ քամու առաջացման պատճառները,
զ/ հասկանալ մթնոլորտային աղտոտվածության հիմնախնդիրը,
է/ մթնոլորտի պահպանության վերաբերյալ անձնական դիրքորոշումներ ձևավորել:

Աշակերտները կկարողանան

ա/ դիտարկումների արդյունքում կանխատեսել եղանակը,
բ/ աշխարհագրական լայնության գործոնը կապել մյուս կլիմայաստեղծ գործոնների հետ,
գ/ խնդիրներ լուծել,
դ/ պատրաստել խոնավաչափ և օգտագործել այն որոշակի չափումներ կատարելիս,
ե/ կազմել դիագրամներ, աղյուսակներ, կորեր,
զ/ կազմել կլիմայական քարտեզներ,
է/ դիտարկել, չափել, կազմել, լուծել, համեմատել, փոխդասավորել, ենթադրել, կանխատեսել:

Աշակերտները կարժևորեն

ա/ ճանաչելով մթնոլորտը, դիտարկելով ոլորտը, յուրովի բացահայտել դրանց կապը կյանքի համար անհրաժեշտ գոյության պայմանների հետ,
բ/ հասկանալով իրենց տարածաշրջանում մթնոլորտի աղտոտվածության պատճառները՝ դրանք տրամաբանորեն կապել մթնոլորտի աղտոտվածության գլոբալ հիմնախնդիրների հետ:

բ) զարգացնող.

Աշակերտները կզարգացնեն հետևյալ հմտությունները.

ա/ օգտագործելով տեսական գիտելիքները՝ կկարողանան դրանք օգտագործել կյանքում, առօրյայում,

բ/ օգտվելով ջերմաչափի, բարոմետրի, խոնավաչափի ցուցմունքներից՝ եղանակային կանխատեսումներ կատարել,
գ) դաստիարակչական.
Աշակերտները խնբային աշխատանքի շնորհիվ ձեռք կբերեն սոցիալական հմտություններ:

ԴԱՍԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ՝
ա) ուսուցման արագ գնահատելի, չափելի արդյունքները.
գծագել, որոշել, չափել, հաշվել, դիտարկել, կանխատեսել,տեղեկություններ հավաքել, դասակարգել, խմբավորել, սեփական կարծիք,համոզմունքներ ձևավորել:
բ) ուսուցման հեռահար, հիմնական խնդիրները.
Աշակերտները, կարևորելով մթնոլորտի աղտոտումը որպես գլոբալ հիմնախնդիր, փորձեն հանդես գալ սեփական նախաձեռնություններով՝ իրենց տարածաշրջանի մթնոլորտի պահպանման հարցում:

10. ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄԸ ՝
Գնահատել թվանշաններով, առավելագույնը 10 միավոր:

11. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿՆԵՐԸ ՝
ԱՌԱՆՁԻՆ ԴԱՍԵՐ ՆՇՎԱԾ ԱՌԱՐԿԱՆԵՐԻՑ« ՀԱՄԱԿՑՎԱԾ ԴԱՍԵՐ:

12. ՆԵՐԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԵՎ ՄԻՁԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԿԱՊԵՐԸ՝
ՖԻԶԻԿԱ, ՔԻՄԻԱ, ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ, ԿԵՆՍԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ
13.ԱՆՀՐԱԺԵՇՏ ՊԱՐԱԳԱՆԵՐԸ (ուսումնական նյութեր)՝
ԳՐՔԵՐ, ՏԵՏՐԵՐ, ՀԱՄԱՑԱՆՑԱՅԻՆ ՆՅՈՒԹԵՐ,ՋԵՐՄԱՉԱՓ, ԲԱՐՈՄԵՏՐ, ԽՈՆԱՎԱՉԱՓ

14. ՑՈՒՑԱԴՐԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐԸ՝
ՊԱՍՏԱՌՆԵՐ, ՍԱՀԻԿԱՇԱՐԵՐ, ՏԵՍԱՆՅՈՒԹԵՐ

15. ԴԱՍԱՍԵՆՅԱԿԻ ԿԱՀԱՎՈՐՈՒՄԸ՝
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԳՐԱՏԱԽՏԱԿ, ՆՍՏԱՐԱՆՆԵՐԻ ԴԱՍԱՎՈՐՈՒՄԸ ՀԱՐՄԱՐԵՑՆԵԼ ԽՄԲԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻՆ

16.ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ՝
ՄԹՆՈԼՈՐՏ
ՄԹՆՈԼՈՐՏԸ ՈՐՊԵՍ ԳԱԶԱՅԻՆ ԹԱՂԱՆԹ
ՄԹՆՈԼՈՐՏԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՄԱՐԴՈՒ, ԲՈՒՅՍԵՐԻ, ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ԿՅԱՆՔՈՒՄ
ՔԱՄԻ. ԱՌԱՁԱՑՄԱՆ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ
ՋԵՐՄԱՍՏԻՃԱՆ, ՃՆՇՈՒՄ, ԽՈՆԱՎՈՒԹՅՈՒՆ

17. ԴԱՍԻ ԿԱՐԳԱԽՈՍԸ՝ ԱՊԱՀՈՎԵԼ ՄՆԱՅՈՒՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ, ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻ ԱՄԲՈՂՋ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄ:
18.ԴԱՍԻ ԸՆԹԱՑՔԸ
ԴԱՍԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄ,
ԱՄՓՈՓԻՉ ՀԱՐՑՈՒՄ,
ԳՆԱՀԱՏՈՒՄ:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Մեր հետազոտության արդյունքում հանգեցինք մի շարք եզրակացությունների՝

1. Ուսուցման որակի բարելավումը նպաստում է կրթության որակի բարելավմանը, հետևաբար պահանջվում է, որ ուսուցիչն ունենա մասնագիտական անհրաժեշտ պատրատվածություն, համապատասխան մասնագիտական և անձնային կոմպետենցիաներ, որոց զարգացմանը մեծապես կարող է օժանդակել գործընկերների հետ համագործակցությունը;
2. Խրախուսելի է մանկավարժական օրինակելի փորձի փոխանակումը դպրոցում որպես նորարարական գործընթացի խթանում, առաջավոր փորձի փոխանակում:
3. Առարկայական մեթոդական միավերումը՝ որպես դպրոցի խորհրդակցական մարմինների առաջին օղակ, մեծապես նպաստում է ուսուցիչների համագործակցային ընդունակությունների զարգացմանը: Այն պետք է պահանջ դնի ուսուցիչների առջև առավել բաց լինել մասնագիտական փորձով կիսվելու հարցում և արդյունավետություն գրանցած ուսուցչի փորձից անել որոշակի հետևություններ:
4. Խրախուսելի է ուսուցիչների մասնակցությունը առարկայական մեթոդական միավորումների աշխատանքին, որը կարող է ուսուցչի համար դառնալ սեփական ներուժը ի ցույց դնելու, համագործակցային հարաբերություններ հաստատելու համար:
5. Ուսուցիչները պետք է հնարավորինս շատ համագործակցեն, բանակցեն խնդրահարույց հարցերի շուրջ, կիսվեն իրենց ձեռքբերումներով՝ պահպանելով մանկավարժական էթիկայի նորմերը:
6. Շատ կարևոր է փորձառու ուսուցիչների և սկսնակ ուսուցիչների միջև համագործակցության ձևերի որոնում, որը կնպաստի փորձի փոխանակման լավագույն ձևաչափերի որոնմանը:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. https://www.arlis.am/documentview.aspx?docID=74345 ՀՀհանրակրթության մասին օրենք:
2. https://aspu.am/website/images/old/upload/file/1(211).pdf ՀՊՄՀ, «Մանկավարժական կրթության զարգացման հայեցակարգ»:
3. http://gspi.am/media/journal/2014n1b/33.pdf Ս. Ժ. Արշակյան, Գիտական տեղեկագիր, Դասավանդման մեթոդիկա, Երևան, 2014:
4. Ժամանակակից մանկավարժական մոտեցումներ. Տեսություններ, մեթոդներ, գնահատում, Ս.ՎարդումյանՆ.Ջաղինյան,Լ. Հարությունյան, Գ.Վարելլա, 2008
5. Կոմենսկի Յ. Ա., Մեծ դիդակտիկա, Զանգակ հրատ., 2010
6. Նախարարի 2022թ. օգոստոսի 5-ի «Հանրակրթական ուսումնական հաստատության ուսուցչի մասնագիտական չափանիշները սահմանելու մասին» N 30-Ն հրաման
7. https://www.arlis.am/documentview.aspx?docID=74345 ՀՀհանրակրթության մասին օրենք